

ՍՓՅՈՒՐՔԻՑ ԱՏԱՑՎԱԾ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

UN ART FONDAMENTAL: LE TAPIS

(ՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ՝ ԳՈՐԴԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ)

(Ալբերտ Աշոյան, Փարիզ, 1949 թ., 287 էջ)

Տիար Ալբերտ Աշոյանը, Հայկական թանգարանի ընդհանուր քարտուղարը Ֆրանսիայում և Հիմնադիրը, 1949 թվին Փարիզում հրատարակել է մի ստվար հատոր, նվիրված գորգագործության ուսումնասիրությանը:

Հարգելի արվեստագետը իր աշխատասիրով յունից մի օրինակ, հատկապես տպագրված ընտիր թղթի վրա, նվիրել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. ին, նշելով այդ մասին. „Exemplaire imprimé spécialement pour sa Sainteté Kévork VI, Catholicoisse des Arméniens du Monde et offert par l'auteur“.

Մեծածավալ այս հատորը բաղկացած է 287 էջից, չհաշված առջեկի պահպանակներն ու վերջի բովանդակությունը:

Հեղինակին աշխատակցել են, ինչպես ցուց է տալիս հատորի վերջում զետեղված Հիշատակագրությունը, մի խումբ մասնագետներ տարբեր արվեստների գծով:

Աշխատությունը Ֆրանսիանից թարգմանվել է անգլերենի տիկին Դեկորիի կողմից, և հրատարակվել երկու լեզուներով, հանդիպակաց երկու էջերի վրա և երրեմն միևնույն էջում միմյանց տակ: Ցավալի է, որ զուգընթաց շի տրված հայերենը:

Հատորի սկզբում տրվել է մի քարտեզ գորգի գործվածքի տեղագրության վերաբերյալ: Դրբի առաջարանին հաջորդում է Շարատարակի ազգը (էջ 28—30), և ապա մի գլուխ՝ Գորգերի պատրաստության, պահպանման, նորոգության և փորձագիտության (էքսպերտիզացիա) մասին (էջ 30—39): Հաջորդական գլուխներում քննության են առնվում եգիպտական (էջ 43—50), Հայկական (էջ 53—90), պարսկական (էջ 93—124), Հնդկա-պարսկական (էջ 127—132), իսպանա-արաբական (էջ 135—142), աղվանական (էջ 145—146), թյուրքաստանա-

կան (էջ 149—158), չինական և Հնդկաշխական (էջ 161—172), փոքր-ասիական (Թյուրքական) (էջ 175—214), Բալկանների (էջ 217—224), լիճական (էջ 227—234), իսպանական և պորտուգալական (էջ 237—248) գորգերն ու կապերտները (կիլիմ) և այլն: Աշխատության վերջում տրված է ընդունակ բիբլիոգրաֆիա գորգագործության մասին:

Աշխատությունը պատկերազարդված է: Միագույն (սկ) պատկերներից և մասնագիտական բացատրությունների հատուկ գծագրություններից և մակետներից բացի, կան գումարիակ իլուստրացիաներ:

Հեղինակը ընդարձակ տեղ է հատկացնում հայկական գորգի ուսումնասիրությանը: Նա իր աշխատության մեջ նկատի է առնում 13-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին կեսի աշքի ընկննող հայկական գորգերի նմուշները: Հայաստանում Շինկորադիլ արվեստների միջև, ասում է աշխատասիրողը, որ գորգագործությունը վստահաբար առաջին կարգի մրա կարելի է դնել: Ամենահին գորգերը, կամ հանգուցավոր գորգերի կտորները, որոնց վրա մենք կարող ենք հիմնալ մեր օրերում, հայկական են»: Հեղինակը շեշտում է՝ թե հայկական գորգերը իրենց հատկանշական գերբը կորցրին, եթե Հայաստան ընկալ օտարեների տիրապետության տակ: Եհարկե, ցանկալի է, որ նա առիթը ունենար գտնվելու Սովետական Հայաստանում, որտեղ մեր արվեստագետները ճարտարապետության, քանդակագործության, մանրանկարչության, գորգագործության կամ արվեստի այլ բնագավառներում, ծաղկեցնում են հայ արվեստը, օգտագործելով հին և ընտիր մոտիվները: Այս մասին, դժբախտարար, կանգ շի առել աշխատասիրողը:

Արվեստների պատմությունով զրադաշտությունների և գորգի մասնագետների համար հետաքրքիր և օգտագետ գործ է այս հատորը:

